14

ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

14 QUESTIONS AND ANSWERS ABOUT BENEFICIAL OWNERSHIP TRANSPARENCY AND DECLARATION PROCEDURE

This book was produced in cooperation with the Freedom of Information Center with support from the Center for International Private Enterprise (CIPE).
The views and opinions expressed in the program do not necessarily reflect the views of CIPE.

Այս գրքույկը պատրաստվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համագործակցությամբ Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (CIPE) աջակցությամբ:
Ծրագրում արտահայտված տեսակետներն ու կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն CIPE-ի տեսակետները:

Երևան 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ / CONTENT

1. Ո՞վ է կազմակերպության իրական շահառուն
   Who is the beneficial owner of the organization?
2. Ինչո՞վ է տարբերվում ընկերության սեփականատերը իրական շահառուից
   How does the owner of the company differ from the beneficial owner?
3. Ի՞նչ տվյալներ է պարունակում իրական շահառուի հայտարարագիրը
   What data does a beneficial ownership declaration contain?
4. Ինչպե՞ս հայտնաբերել կազմակերպության իրական շահառուներին
   How to identify the beneficial owners of the organization?
5. Ինչպե՞ս լրացնել ԻՇ հայտարարագիրը
   How to complete the beneficial ownership declaration?
6. Ի՞նչ պետք է անել, եթե հայտարարագրումից հետո կազմակերպության իրական շահառուների ցանկում նոր մարդ է հայտնվում
   What should be done in case a new beneficial owner is added after the declaration is submitted?
7. Որտե՞ղ են հրապարակվում ԻՇ հայտարարագրերը
   Where are beneficial ownership declarations published?
8. Ի՞նչ ժամանակահատվածում պետք է ընկերությունները ներկայացնեն ԻՇ հայտարարագիր
   When is the deadline for companies to submit the declaration?
9. Արդյո՞ք խորհրդի անդամը (board member) ավտոմատ համարվու՞մ է նաև ընկերության իրական շահառու
   Is the board member automatically considered a beneficial owner of the company?
10. Որքանո՞վ են իրական շահառուի անձնական տվյալները պաշտպանված հանրային ռեեստրում: Չկա՞ ռիսկ, որ ԻՇ-ի անձնական տվյալների գաղտնիության իրավունքը կոտնահարվի հրապարակայնության արդյունքում
    Is the personal data of beneficial owners protected? Is there a risk that the beneficial owner's privacy is endangered as a result of beneficial ownership transparency?
11. Տարածվու՞մ է ԻՇ հայտարարագրման պահանջը ԱՁ-ի և հասարակական կազմակերպությունների վրա
    Does the beneficial ownership declaration requirement apply to individual entrepreneurs and NGOs?
12. Որո՞նք են ԻՇ բացահայտման հիմնական առավելությունները ընկերությունների համար
    What are the main benefits for companies to identify their beneficial owners?
13. Ինչպե՞ս ստանալ իրական շահառուի վերաբերյալ տվյալներ և օգտագործել դրանք
    How to find and use information on beneficial owners?
14. Ի՞նչ իրավական հետևանքներ կարող են առաջանալ իրական շահառուների բացահայտման կանոնները խախտելու դեպքում
    What are the legal consequences for violating beneficial ownership disclosure rules?

1 Ո՞Վ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆ

Կազմակերպության իրական շահառուն այն անհատն է, ում սեփականության իրավունքով պատկանում են ընկերության բաժնետոմսեր (բաժնեմաս) կամ այն անհատը, ով այլ միջոցներով վերահսկում է կազմակերպությունը:

ԻՇ-ն իրական մարդիկ են, ովքեր կանգնած են ընկերության սեփականության շղթայի վերջում:

Նրանք.

- վերահսկողություն են իրականացնում իրավաբանական անձի նկատմամբ, և/կամ
- ունեն դրա վերջնական սեփականության մասնաբաժինը, և/կամ
- դրանից շահույթ են ստանում:

Այլ ընկերությունները կարող են լինել ընկերության անմիջական, իրավական սեփականատերը, բայց միայն մարդիկ կարող են լինել ԻՇ:

Պետությունները հաճախ օգտագործում են ԻՇ բացահայտման շեմեր:

Հայաստանում ԻՇ բացահայտման շեմը հետևյալն է.

10% հանքարդյունաբերության ոլորտում

20% բիզնեսի մյուս բոլոր ոլորտներում



WHO IS A BENEFICIAL OWNER OF THE ORGANIZATION? 1

A beneficial owner (BO) of an organization is a natural person(s) who ultimately owns or controls a legal entity, and/or the natural person on whose behalf a transaction is being conducted. In other words, the beneficial owner is the person or persons who benefit from or exercises control over a legal vehicle.

Beneficial owners of the company are individuals who stand at the end of the ownership chain of the company.

They:

- have control over a legal entity, and/or
- have ultimate ownership shares, and/or
- receive benefits from these shares.

Other companies may be the direct legal owners of the company, but only people can be the beneficial owners.

States often use BO thresholds.

In Armenia the threshold for revealing the beneficial owner is as follows:

10% mining industry (PEPs = 0%)

20% other sectors of business.



2 ԻՆՉՈ՞Վ Է ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻՑ

Եթե ընկերության բանեթոմսերը (բաժնեմասը) պատկանում են անհատի, ապա ընկերության մասնակիցը և ընկերության իրական շահառուն կարող են համընկնել: Միևնույն ժամանակ, եթե օրինակ ընկերության բաժնետոմսերը պատկանում են մեկ այլ՝ երկրորդ ընկերության, ապա ընկերության սեփականատերը կլինի այդ ընկերությունը, իսկ իրական շահառուն՝ այն անհատը, ում պատկանում են երկրորդ ընկերության բաժնետոմսերը:

Ընկերության բաժնետոմսի (բաժնեմասի) սեփականատեր կարող է լինել նաև մեկ այլ ընկերություն: Այդպիսի դեպքերում ընկերության իրական շահառուն այն անհատն է, ով գտնվում է ընկերության սեփականության շղթայի վերջում:

HOW DOES THE OWNER OF THE COMPANY DIFFER FROM THE BENEFICIAL OWNER? 2

In case the shares of the company belong to an individual, then the participant of the company and beneficial owner of the company may match. At the same time, if the shares of the company belong to a third company, the beneficial owner of the company is the individual who possesses the shares of the third company. This example is depicted in the figure. Also, another company may be the owner of a share(s) of the company. In such cases, the beneficial owner of the company is the individual who is at the end of the ownership chain of the company.

3 ԻՆՉ ՏՎՅԱԼՆԵՐ Է ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Կազմակերպությունների իրական շահառուների հայտարարագրերում ներկայացվում են՝

- կազմակերպության մասին տվյալները,
- բաժնետոմսերի ցուցակման տվյալները,
- պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցության մասին տվյալները,
- միջանկյալ իրավաբանական անձանց մասին տվյալները,
- ընկերության իրական շահառուների տվյալները:

WHAT DATA DOES A BENEFICIAL OWNERSHIP DECLARATION CONTAIN? 3

Beneficial ownership declarations of organizations include:

- Information concerning the organization,
- Listing date of shares,
- Information concerning participation of the state, community or an international organization,
- Information about intermediate legal entities,
- Data about beneficial owners.

ԻՇ հայտարարագրում ներառված իրական շահառուի տվյալները

- Անուն/ազգանուն
- Քաղաքացիություն
- Անձի ինքնությունը հավաստող տվյալները
- Անձը հաստատող փաստաթուղթը
- Անձի հաշվառման և բնակության հասցեները
- Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (համապատասխան փաստաթղթեր)
- Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները (երբվանից է հանդիսանում ԻՇ)
- Իրական շահառուի կոնտակտային տվյալները

Միջանկյալ իրավաբանական անձանց տվյալները

- Միջանկյալ իրավաբանական կազմակերպության տվյալները
- Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները
- Մասնակցության շղթան

Beneficial owner's data that must be included in the declarations

- Full name /surname
- Citizenship
- Proof of identify of the individual
- Identity document
- Registration and residence addresses
- Supporting documents that prove beneficial ownership
- Information on the status of the beneficial owner (since when he/she has become an owner)
- Contact details of the beneficial owner

Intermediate legal entity data

- Information about the intermediate legal entity
- Listing data of intermediate legal entity shares
- Participation chain

4 ԻՆՉՊԵՍ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ

Կազմակերպության ղեկավարումն իրականացնող անձը (օրինակ՝ գործադիր տնօրենը) պարտավոր է ողջամիտ ջանքեր գործադրել իր կազմակերպության իրական շահառուներին հայտնաբերելու և նրանց տվյալները ստանալու համար:

Կազմակերպությունն այդ նպատակով կարող է հարցումներ անել իր մասնակիցներին, այդ թվում՝ մասնակից կազմակերպության ներկայացուցիչներին՝ խնդրելով տրամադրել իրական շահառուների մասին տեղեկություններ: Կազմակերպությունը կարող է նաև հարցումներ անել այն անձանց, ում իրական շահառու լինելու վերաբերյալ առկա են կասկածներ: Նշված անձինք պարտավոր են պատասխանել կազմակերպության հարցումներին 20 օրվա ընթացքում:

Կազմակերպությունը ստանում է իրական շահառուների անձնական տվյալները և այդ անձանց իրական շահառու հանդիսանալը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես նաև հայտարարագրի լրացման համար էական այլ փաստաթղթեր:

Եթե կազմակերպության իրական շահառուն օտարերկրյա քաղաքացի է, ապա վերջինիս անձը հաստատող փաստաթղթերը վավերացված և թարգմանված ներկայացվում են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն: Մնացած բոլոր փաստաթղթերը չեն ներկայացվում Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, սակայն պետք է պահպանվեն կազմակերպության կողմից ոչ պակաս, քան հինգ տարի, այն պահից երբ համապատասխան անձը դադարում է լինել կազմակերպության իրական շահառու:

4 HOW TO IDENTIFY THE BENEFICIAL OWNERS OF THE ORGANIZATION?

The person managing the organization (e.g. the executive director) must make a reasonable effort to identify the beneficial owners of the organization and obtain information about them.

For this purpose, the organization may send inquiries to its participants, including representatives of the participating organization, requesting information about beneficial owners. The organization may also conduct inquiries about persons they have suspicion could be beneficial owners. These persons are obliged to respond to the inquiries of the organization within 20 days.

The organization must collect the personal data of beneficial owners, documents confirming that they are beneficial owners, and other documents essential to completing the declaration.

In case a beneficial owner of the organization is a foreign citizen, authorized and translated documents confirming the identity of that person must be submitted to the Agency for State Register of Legal Entities. Documentation on other beneficial owners without foreign citizenship are not required to be submitted to the Agency, but must be stored by the organization for at least five years from the moment the person concerned ceases to be a beneficial owner of the organization.

5 ԻՆՉՊԵՍ ԼՐԱՑՆԵԼ ԻՇ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով կազմակերպության տնօրենի կամ լիազորված ներկայացուցչի կողմից **bo.e-register.am** կայքում: Կայքում լրացվում են կազմակերպությանը վերաբերելի դաշտերը, գեներացված ֆայլում դրվում է էլեկտրոնային ստորագրություն և էլ. համակարգի միջոցով ուղարկվում է պետական ռեգիստրի գործակալություն:

Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը հնարավորություն է տալիս հայտարարագիրը լրացնել MobileID ծառայության միջոցով, ինչպես նաև՝ ընկերության տնօրենի նույնականացման քարտը ընթերցող սարքի մեջ տեղադրելու միջոցով: Հայտարարագրի լրացումը հնարավոր է նաև լիազորված անձի միջոցով, որպիսի պարագայում անհրաժեշտ է համապատասխան լիազորագրի առկայություն:
Լրացման կարգը և հայտարարագիրը հասանելի են այստեղ՝

https://www.e-register.am/am/docs/563:

HOW TO COMPLETE THE BENEFICIAL OWNERSHIP DECLARATION? 5

The beneficial ownership declaration should be submitted electronically through the **bo.e-register.am** website by the director or an authorized representative of the organization. On the website, the fields applicable to the organization are filled in, an electronic signature is placed in the generated file, and the submission is sent to the Agency for State Register via the electronic system.

The electronic system for declaring beneficial owners allows organizations to complete the declaration through the MobileID service, as well as by inserting the identification card of the company director in the reader. It is also possible to complete the declaration through an authorized person, if the relevant power of attorney exists.

Full details on the procedure and the declaration form are available online:

https://www.e-register.am/am/docs/563:

6 ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ, ԵԹԵ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՆՈՐ ՄԱՐԴ Է ՀԱՅՏՆՎՈՒՄ:

Իրական շահառուների ցանկում փոփոխություն տեղի ունենալու դեպքում (այդ թվում եթե կազմակերպության իրական շահառու է դարձել նոր անձ), կազմակերպությունն այդ մասին իմանալուց հետո 40 օրվա ընթացքում պարտավոր է նոր հայտարարագիր ներկայացնել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ համապատասխան փոփոխության գրացման նպատակով:

6 WHAT SHOULD BE DONE IN CASE A NEW BENEFICIAL OWNER IS ADDED AFTER THE DECLARATION IS SUBMITTED?

In case changes are made in the list of beneficial owners (including if new person becomes a beneficial owner of the company), the organization should submit a new declaration to the Agency for State Register of Legal Entities to register relevant changes within 40 days after they know about changes.

7 ՈՐՏԵՂ ԵՆ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ ԻԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ

ԻԾ Հայտարարագրերը հրապարակվում են ԻԾ հանրային ռեեստրում՝ e-register.am-ում: Կազմակերպությունները տվյալները պետք է ներկայացնեն առցանց՝ bo.e-register.am կայքի միջոցով և թարմացնեն իրական շահառուների փոփոխվելու մասին իմանալուց հետո 40 օրվա ընթացքում: Եթե տարվա ընթացքում փոփոխություններ տեղի չեն ունենում, ապա կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը հաստատում է, որ իր իրական շահառուների տվյալներն արդիական են:

Հայտարարագրի ձևը հասանելի է նաև այստեղ՝

www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155465

7 WHERE ARE BENEFICIAL OWNERSHIP DECLARATIONS PUBLISHED?

The declarations are available in the e-register.am public register of beneficial owners. The data should be submitted through the **bo.e-register.am** webpage by the organizations and updated within 40 days after any change of a beneficial owner occurs. If no change occurs during the year, the organization must confirm through the electronic system that the data of its beneficial owners is up to date, each year by **February 20**.

Declaration form is available online:

www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155465

8 ԻՆՉ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՊԵՏՔ Է ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԻՇ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

2021 թվականի հունիսի 3-ին Ազգային ժողովն ընդունել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը, որը իրական շահառուների մասին հայտարարագրերի ներկայացման կարգի և ժամկետների վերաբերյալ նախատեսում է մի շարք նոր կարգավորումներ:

Օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձինք պարտավոր են իրենց իրական շահառուների վերաբերյալ տիրապետել արժանահավատ տեղեկությունների և ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

2021 թվականի սեպտեմբերի 1-ից հայտարարագրման համակարգին միանում են հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի կազմակերպությունները և տեսալսողական մեդիածառայություն մատուցող կազմակերպությունները[1] (հեռուստառադիոընկերությունները): Այս ընկերությունները հայտարարագիր ներկայացնում են մինչ 2021թ. նոյեմբերի 1-ը:

2022 թվականի հունվարի 1-ից հայտարարագրման համակարգին միանում են բոլոր առևտրային կազմակերպությունները (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, բաժնետիրական ընկերություններ և այլն), բացի այն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից, որոնց մասնակիցները միայն անհատներ են (մասնակիցների ցանկում առկա չէ որևէ ընկերություն): Այս ընկերությունները հայտարարագիր ներկայացնում են մինչ 2022թ. մարտի 1-ը:

2023 թվականի հունվարի 1-ից հայտարարագրման համակարգին միանում են այն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, որոնք ունեն միայն ֆիզիկական անձ մասնակիցներ, ինչպես նաև բոլոր ոչ առևտրային կազմակերպությունները (հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները, կուսակցությունները և այլն): Այս կազմակերպությունները հայտարարագիր ներկայացնում են մինչ 2023թ. մարտի 1-ը:

1) Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտը ներառում է էներգետիկայի բնագավառը, ջրային ռեսուրսները, հեռահաղորդակցության բնագավառը, փոստային կապի բնագավառը, երկաթուղային տրանսպորտի բնագավառը, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը.

WHEN IS THE DEADLINE FOR COMPANIES TO SUBMIT THE DECLARATION? 8

On June 3, 2021, the National Assembly of the Republic of Armenia adopted a new legislative package with amendments to the Law "On the state registration of legal entities, the state accounting of the allocated divisions, organizations of legal entities and individual entrepreneurs," which included a number of new regulations on the terms and conditions while submitting the beneficial ownership declaration.

Starting from September 1, 2021, organizations in regulated public services and organizations providing audiovisual media services [1] (TV and radio companies) will join the Declaration system. These companies must submit declarations by **November 1, 2021.**

From **January 1, 2022,** all commercial organizations (limited liability companies, joint stock companies, etc.) join the declaration system, except for those limited liability companies whose participants are only individuals (there are no companies among the owners). These organizations must submit Declarations by **March 1, 2022.**

From **January 1, 2023,** limited liability companies with only individual participants, as well as all non-commercial organizations (NGOs, foundations, parties, etc.) will also join the Declaration system. These organizations must submit a declaration by **March 1, 2023.**

1) Public services include the sphere of energy, water resources, telecommunications, the postal service, railway transport, and mandatory technical inspection of vehicles.

9 ԱՐԴՅՈ՞Ք ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ (BOARD MEMBER) ԱՎՏՈՄԱՏ ՀԱՄԱՐՎՈՒ՞Մ Է ՆԱԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ

Կազմակերպության խորհրդի անդամները միայն իրենց պաշտոնի ուժով չեն համարվում կազմակերպության իրական շահառու: Խորհրդի անդամը կարող է լինել իրական շահառու, եթե ունի օրենքի շեմը գերազանցող մասնակցություն կամ այլ հիմքերով իրականացնում է փաստացի վերահսկողություն կազմակերպության նկատմամբ:

IS THE BOARD MEMBER AUTOMATICALLY CONSIDERED A BENEFICIAL OWNER OF THE COMPANY? 9

Board members of the organization are not considered to be beneficial owners only by the force of their position. A board member can be a beneficial owner if he/she has a share beyond the law limit or de facto exercises control over the organization on other grounds.

10 ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵԵՍՏՐՈՒՄ: ՉԿԱ՞Ռ ՌԻՍԿ, ՈՐ ԻՇ-Ի ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿՈՏՆԱՀԱՐՎԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:

Ֆիզիկական անձանց անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը (ՀԾՀ), նրանց բնակության և հաշվառման հասցեները և կապի միջոցների մասին տեղեկությունները հրապարակային հասնելի տվյալներ չեն՝ համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 6-րդ հոդվածի: Այսինքն, անգամ վճարի դիմաց այդ տվյալները չեն կարող տրամադրվել:

IS THE PERSONAL DATA OF BENEFICIAL OWNERS PROTECTED? IS THERE A RISK THAT THE BENEFICIAL OWNER'S PRIVACY IS ENDANGERED AS A RESULT OF BENEFICIAL OWNERSHIP TRANSPARENCY? 10

Passport details, social card number, the place of residence and registration addresses, means of communication of individuals are not publicly available, according to the Law on State Registration of Legal Entities, Separate Subdivisions of Legal Entities, Institutions and State Entrepreneurs. That is, those data cannot be provided for a fee too.

11 ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԻՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԸ ԱՁ-Ի ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Իրական շահառուների բացահայտման կանոնները տարածվում են միայն կազմակերպությունների վրա: Հետևաբար, դրանք վերաբերելի չեն անհատ ձեռներեցներին:

Հասարակական կազմակերպությունները պետք է հայտարարագիր ներկայացնեն **2023 թվականի հունվարի 1-ից:**

11 DOES THE BENEFICIAL OWNERSHIP DECLARATION REQUIREMENT APPLY TO FOR THE INDIVIDUAL ENTREPRENEURS AND NGOs?

The regulations for identifying beneficial owners are applicable only for organizations. Therefore, they are not relevant for individual entrepreneurs.

Non-governmental organizations should submit a Declaration starting from **January 1, 2023.**

12 ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԻՐ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Գաղտնի իրական շահառուն խնդիրներ է առաջացնում պատասխանատու ընկերությունների համար, քանի որ այն թաքցնում է բիզնես գործընկերների կամ այն ընկերությունների շահառուների ինքնությունը, որոնց հետ նրանք աշխատում են
- Ընկերության իրական շահառուի վերաբերյալ թափանցիկությունը կարող է նվազեցնել ֆինանսական և վարկանիշի հետ կապված ռիսկերը
- Իրական շահառու սեփականության մասին տեղեկատվության հրապարակումը խթանում է պատասխանատու ներդրումներին, ավելի կանխատեսելի ներդրումային միջավայրին և բոլոր ընկերությունների համար հավասար պայմանների ապահովմանը:

Հայաստանում օրենսդրությամբ պարտադիր է շահառուի/ների բացահայտումը, ովքեր իրապես վերահսկում կամ շահույթ են ստանում բիզնեսից: Իրական շահառուի հայտարարագիր ներկայացնելը ընկերությունների պարտավորությունն է:

12 WHAT ARE THE MAIN BENEFITS FOR COMPANIES TO IDENTIFY THEIR BENEFICIAL OWNERS?

- Hidden ownership poses problems for responsible companies because it obscures the identity of business partners, or beneficiaries of the companies with which they do business.
- Transparency about company ownership can reduce reputational and financial risks.
- Publishing information on beneficial ownership supports responsible investment, a more predictable investment climate, and a level playing field for all companies.

According to Armenian legislation, it is mandatory to identify beneficial owner(s) who actually control or have a profit from the business. The companies are required to submit a beneficial ownership declaration.

13 ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԴՐԱՆՔ

Կազմակերպությունների իրական շահառուների վերաբերյալ տվյալները հասանելի են **e-register.am** կայքում:

Կայքի **«Որոնում» բաժնում** հնարավոր է իրականացել որոնում ինչպես ըստ կազմակերպության, այնպես էլ՝ ըստ իրական շահառու ֆիզիկական անձի:

ՔԱՅԼ 1 Այցելեք *e-register.am* կայքը:

ՔԱՅԼ 2 «Որոնում» պատուհանում գրեք կազմակերպության անվանումը:

ՔԱՅԼ 3 Գտեք կազմակերպության անվանումը և սեղմեք վրան:

ՔԱՅԼ 4 Կնկատեք ԻԾ հայտարարագիր ենթաբաժինը, սեղմե՛ք «Տեսնել» կոճակը էկրանի ձախ անկյունում:

ՔԱՅԼ 5 Ուշադրություն դարձրեք ամսաթվին, որպեսզի բացեք թարմացված հայտարարագիրը:

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է՝

- դիտել որպես հայտարարագիր առցանց եղանակով,
- դիտել գծապատկերով, որտեղ երևում է կազմակերպության սեփականության շղթան,
- տպել կամ պահպանել pdf ֆորմատով,
- ներբեռնել JSON ֆորմատով:

JSON (JavaScript Object Notation) ֆորմատը թույլ է տալիս տեքստային տվյալները ցուցադրել համակարգված տեսքով: Տվյալները ներբեռնելուց հետո դրանք կարելի է վերլուծել համակարգչային այլ գործիքների օգտագործմամբ:

HOW TO FIND AND USE INFORMATION ON BENEFICIAL OWNERS? 13

By March 1, 2023 all legal entities registered in Armenia will have submitted their beneficial ownership declaration. The declarations are available in the **e-register.am** public register.

On the website, in the **"Search"** section it is possible to search for both organizations and beneficial owners.

STEP 1 Go to e-register.am.

STEP 2 In the "Search" tab, enter the company's name.

STEP 3 Find the company's name and click on it.

STEP 4 There is a beneficial ownership transparency declaration section. Click "View" to see declarations appear on the left side of the screen.

STEP 5 Pay attention to the date to open the most recent declaration and click on it.

THE DATA CONCERNING BENEFICIAL OWNERS CAN BE:

- Viewed online as a declaration;
- Viewed as a chart showing the ownership chain of an organization;
- Printed or saved as a PDF;
- Downloaded in JSON format.

JSON (JavaScript Object Notation) format enables the display of text data in a systematic way. Once downloaded, the data can be analyzed using other computer tools.

14 Ի՞ՆՉ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՋԱՆԱԼ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Իրական շահառուների հայտարարագրման հետ կապված օրենսդրական կանոնների խախտումները կարող են առաջացնել երեք բնույթի հետևանքներ՝

Վարչական պատասխանատվություն [2]

Կազմակերպության պաշտոնատար անձի նկատմամբ (օրինակ, գործադիր տնօրենի, նախագահի) վարչական պատասխանատվություն կարող է կիրառվել հետևյալ արարքների համար՝

- հայտարարագիրը չներկայացնելը,
- հայտարարագիրը կարգի խախտմամբ ներկայացնելը,
- անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը,
- պատշաճ ուսումնասիրության կանոնները խախտելը:

Վարչական վարույթ հարուցելուց հետո մինչև վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը օրենքի խախտումը շտկելու դեպքում անձը ենթակա չէ պատասխանատվության:

2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.29-րդ հոդված:

WHAT ARE THE LEGAL CONSEQUENCES FOR VIOLATING BENEFICIAL OWNERSHIP DISCLOSURE RULES? 14

Violation of the legal rules for beneficial ownership disclosure can cause three legal consequences:

Administrative liability [2]

Administrative liability can be applied to the responsible official of the organization (for example, executive director or chairman) for the following actions:

- Not submitting the declaration,
- Submitting the declaration in violation of procedures,
- Negligent submission of inaccurate or incomplete data, or
- Violation of due diligence rules.

If the organization corrects its actions before the decision on sanctions is reached, it’s no longer liable.

2) Administrative Offenses Code of RA, Article 169.29

Քրեական պատասխանատվություն [3]

Կազմակերպության պաշտոնատար անձի, իրական շահառուի կամ մասնակցի նկատմամբ քրեական պատասխանատվություն կարող է կիրառվել դիտավորությամբ կատարված հետևյալ արարքների համար՝

- կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը,
- կազմակերպության մասնակցի կամ իրական շահառուի կողմից հայտարարագիրը ներկայացնող կազմակերպությանը կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը կամ նշված կազմակերպության հարցմանը չպատասխանելը:

Կազմակերպության լուծարում դատական կարգով [4]

Երեք տարի անընդմեջ հայտարարագիր չներկայացնելու կամ իրական շահառուների բացահայտման օրենսդրական կանոններն այլ կերպ բազմակի կամ կոպիտ խախտելու դեպքում Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը կարող է դիմել դատարան՝ իրավաբանական անձի լուծարման պահանջով:

3) Քրեական օրենսգրքի 216.1-ին հոդված (Նոր քրեական օրենսգրքի 294-րդ հոդված):
4) «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 60.5-րդ հոդվածի 6-րդ մաս:

Criminal liability [3]

Criminal liability can be applied to the official of the organization, beneficial owner, or participant of the organization for the following intentional actions:

- Submitting false information or concealing data that should be provided,
- Participant or beneficial owners providing false information to the organization submitting the declaration, concealing data that should be submitted, or failure to respond to an inquiry of the organization in question.

Liquidation of the legal entity by the court [4]

In case of failure to submit a declaration for three consecutive years, or other repeated or gross violations of the legal rules for beneficial ownership disclosure, the Agency for State Register of Legal Entities may apply to court requesting liquidation of the legal entity.

3) Criminal Code of Ra, Article 216.1 (Article 294 of the New Criminal Code)
4) "On the state registration of legal entities, the state accounting of the allocated divisions, organizations of legal entities and individual entrepreneurs" Law, Part 6, Article 60.5

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն (ԻԱԿ) հիմնադրվել է 2001թ.-ի հուլիսի 1-ին Երևանում մի խումբ լրագրողների և իրավաբանների կողմից: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

2001թ.-ին ԻԱԿ-ի հիմնած Տեղեկատվության ազատության կոնսորցիումը ակտիվ դերակատարում ունեցավ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մշակման և ընդունման գործում 2003թ.ին: Կենտրոնը ավելի քան 60 ծրագիր է իրականացրել, ինչպես տեղական, այնպես էլ միջազգային խոշոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ: ԻԱԿ-ի նախագծերի շնորհիվ ՀՀ-ում ձևավորվել է տեղեկատվության ազատության ոլորտում առաջավոր փորձ, ՀՀ կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրվել է ՏԱ պաշտասխանատուի ինստիտուտը:

ԻԱԿ-ն ակտիվ գործունեություն է իրականացնում «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) միջազգային նախաձեռնության շրջանակում, ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարում, ապատեղեկատվության և կեղծ լուրերի պայքարում, բիզնեսի իրական շահառուների թափանցիկության ապահովման գործում և այլ առանցքային ոլորտներում:

Օգտագործելով տեղեկատվության ազատությունը որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք՝ 2001 թվականից Կազմակերպությունը ներգրավված է հակակոռուպցիոն տարբեր գործողություններում, ներառյալ քաղաքացիական հասարակության խմբերի և պետական պաշտոնյաների համար դասընթացների կազմակերպումը, հանրային կրթական արշավների կազմակերպումը, հակակոռուպցիոն ազգային ռազմավարությունների մշակմանն աջակցելը, ինչպես նաև դրանց իրականացման մոնիտորինգը, քաղաքական կուսակցությունների քարոզարշավի ֆինանսավորման և հանրության մոնիտորինգը:

FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA (FOICA)

Established in 2001, "Freedom of Information Center of Armenia" non-governmental organization (FOICA) is a dedicated advocate of freedom of information (FOI) and open government values in Armenia. The mission of FOICA is to promote application of the RA Freedom of Information Law, contribute to the transparency and openness of the Armenian government system and to stimulate civil society's involvement in the governance system. The FOI Consortium set up by FOICA in 2001 led to the development of one of the best FOI Laws and its adoption in the RA National Assembly in 2003 and adoption of Personal Data Protection Law in 2015. The NGO has an outstanding experience in engaging with governmental and civic groups, providing them with training and consultations on access to information and fact checking capacity.

FOICA's projects have also led to improving mechanisms of proactive transparency by the local and central government, such as creating the official model web sites for all regional administrations.

FOICA, using freedom of information as a tool to fight against corruption, is actively involved in the anti-corruption struggle since 2001. The organization is involved in various anti-corruption activities, including providing trainings for civil society groups and public officials, organizing public education campaigns, supporting development of anti-corruption national strategies as well as monitoring of their implementation, monitoring political parties campaign financing and public procurement. In 2014-2016 FOICA is fully involved in the anti-corruption struggle through its 3-year "Multi-Faceted Anti-Corruption Promotion" ongoing project funded by EU.

2018 թվականից Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) շրջանակում ակտիվ դերակատարում է ստանձնել իրական շահառուների թափանցիկության գործընթացում՝ նախաձեռնելով հանրային խորհրդակցություններ ԻՇ վերաբերյալ և սերտորեն համագործակցել ՀՀ կառավարության հետ՝ ԲԿԳ-ում ՀՀ կառավարության 4-րդ ազգային գործողությունների ծրագրում իրական շահառուների թափանցիկության վերաբերյալ նոր հանձնառություն ընդունելու նպատակով: Այն հաստատվել է կառավարության կողմից և 2019 թվականի նոյեմբերին դարձել 4-րդ գործողությունների ծրագրի մաս: Ի կատարումն այս հանձնառության՝ ՀՀ ում ստեղծվել է ԻՇ հանրային բաց ռեգիստր բիզնեսի բոլոր ճյուղերի վերաբերյա:

Ներկայում ԻԱԿ-ն ակտիվորեն իրականացնում է այս հավակնոտ բարեփոխման շուրջ հանրային իրազեկման բարձրացմանն ու ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված գործողություններ՝ ներառյալ մշակելով և իրականացնելով հանրային հաղորդակցության ռազմավարություն:

Միջազգային մասնավոր ձեռնարկությունների կենտրոնի (CIPE) աջակցությամբ ԻԱԿ-ը ներգրավում է մասնավոր սեկտորին ապատեղեկատվության դեմ պայքարում՝ ամրապնդելով մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի ռազմավարական ներգրավվածությունը ապատեղեկատվության դեմ պայքարում, ինչպես նաև նպաստելով մասնավոր հատվածի դերի վերաբերյալ ինտելեկտուալ առաջնորդությանն ու միջտարածաշրջանային ուսուցմանը:

ԻԱԿ-ը Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ է 2013 թվականից և վերընտրվել է 2019 թվականի հուլիսին: ԻԱԿ-ը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի միջազգային կոալիցիայի անդամ է 2016 թվականից:

For ensuring a realistic fight against corruption and against money laundering, in 2018 the FOICA initiated public consultations on beneficial ownership and worked closely with the RA Government to adopt a new commitment on beneficial ownership field in the 4th National Action Plan of the Armenian Government in OGP. This commitment was approved by the government in November 2019 and became a part of the 4th NAP.

FOICA is currently actively raising public awareness and capacity building of CSOs on this ambitious reform. It designed and implemented targeted actions, including developing and implementing a public communication strategy in the field by the Open Ownership assistance.

By CIPE support, FOICA is helping the private sector to get involved in the fight against disinformation by enhancing strategic engagement of local private sector stakeholders in efforts that combat disinformation and facilitating cross-regional learning and thought leadership on the private sector’s role in combatting disinformation.

FOICA is a member of the Anticorruption Policy Council since 2013 and reelected again in July 2019. FOICA is a member of UNCAC Coalition.

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

foi@foi.am

www.foi.am

CIPE

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ